ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2023թ. № 960

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՆԻՇԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մանիշակ Դանիելյանի 2023 թվականի հոկտեմբերի 17-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Մանիշակ Դանիելյանին (ՀՎՀՀ 66995631) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ս. Ավետիսյան 317» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 45,8 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի 4-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2023թ. № 961

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 102-Ա որոշումը և «Մուշեղ Գասոյան Վոլոդյայի» անհատ ձեռնարկատիրոջ դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող թիվ 2250 էլեկտրական ենթակայանը 3 (երեք ամիս ժամկետով), 5 000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ամսական վճարով վարձակալության իրավունքով տրամադրել «Մուշեղ Գասոյան Վոլոդյայի» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 67084437)՝ էլեկտրական ենթակայանի օգտագործման արդյունքում առաջացած բոլոր ծախսերը, այդ թվում՝ պարապ ընթացքի ռեժիմում ծախսված էլեկտրաէներգիայի վճարը «Մուշեղ Գասոյան Վոլոդյայի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարելու պայմանով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2023թ. № 962

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՋՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 506,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1665134 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06068QF6QKR4) և Գոհար Գուրգենի Մանուկյանի (ծնված՝ 12.03.1973թ) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրում գտնվող Գոհար Գուրգենի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 506,0 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Արջհովիտ, 3-րդ փողոց, 3/5 անասնաշենք» հասցեն (փոստային դասիչը՝ 1817):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 17
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2023թ. № 963

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0272-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,027 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 56,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2023 թվականի սեպտեմբերի 28-ի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը (գրանցված է սեղանամատյանում 2736), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006Z2GBPTE) և Ջուլիետա Վոլոդիայի Խարազյանի (ծնված՝ 03.02.1960թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0272-0019 կադաստրային ծածկագրով, 0,027 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 56,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ն. Աճեմյան փողոց, 20/5 բնակելի տուն » հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 17
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2023թ. № 364

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵԴՐԱԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հովհաննես Սեդրակի Մուրադյանի ներկայացուցիչ Մակիչ Մանուչարյանը 2023 թվականի հոկտեմբերի 2-ին դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ և ընդունել բարենպաստ վարչական ակտ, այն է՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0130-0031 կադաստրային ծածկագրով 0,19818 հա մակերեսով հողամասի նկատմամբ վերականգնել (ճանաչել) Հովհաննես Սեդրակի Մուրադյանի սեփականության իրավունքը՝ հաստատելով հողամասի հատակագիծը:

Հետազոտելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև 2023 թվականի հոկտեմբերի 12-ի միջնորդությամբ ներկայացված փաստաթղթերը, լսելով Հովհաննես Սեդրակի Մուրադյանին և ներկայացուցիչ Մակիչ Մանուչարյանին՝ գտնում եմ, որ Հովհաննես Սեդրակի Մուրադյանի դիմումը ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝

«Մինչև 2005 թվականի նոյեմբերի 26-ը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի (ներառյալ՝ սույն օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով ձեռք բերված հողամասերը, բացառությամբ սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի) նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած և այդ իրավունքները գրանցած իրավաբանական և ֆիզիկական անձանց սույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են՝

1) տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը.

2) հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը, եթե դրանց վրա սահմանված կարգով կառուցվել են շենքեր և շինություններ, այդ թվում՝ կիսակառույց շենքեր, շինություններ՝ անկախ դրանց ավարտվածության աստիճանից:

Տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման, հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման և սպասարկման համար հողամասերի վրա չի տարածվում սույն օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված սահմանափակումը»:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝

«Սույն հոդվածի 8-րդ կետի պահանջը տարածվում է նաև սահմանված կարգով չգրանցված, սակայն հողամասի նկատմամբ օգտագործման իրավունք ունեցող անձանց վրա, որոնց օգտագործվող հողի նկատմամբ սեփականության իրավունքը պետական գրանցում է ստանում օգտագործվող հողամասի նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով հողհատկացման հիմքերը վերականգնելուց հետո: Եթե սույն կետում նշված հողամասերը ենթակա չեն օտարման, ապա կիրառվում են սույն օրենսգրքի 118-րդ հոդվածի դրույթները»:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 3-րդ կետի «ը» ենթակետի համաձայն՝ այն համայնքներում, որտեղ չեն պահպանվել հողամասերի նկատմամբ քաղաքացիների իրավունքը հաստատող փաստաթղթերը՝ սեփականաշնորհման հանձնաժողովների որոշումներն ու քաղվածքները, տնտեսական գրքերը (ծխամատյան, ժապավենավոր մատյան), հողամասերի նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքի պետական գրանցման համար կարող է հիմք հանդիսանալ քաղաքացիների կողմից տիրապետվող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով նրանց տրամադրելու մասին համայնքի ղեկավարի որոշումը՝ հարկային տեսչություններում, բնակշահագործման տեղամասերում, նախկին կոմունալ տնտեսություններում պահպանվող փաստաթղթերի, հողամասերի սեփականաշնորհման մասնակի հատուցման վճարումների ցուցակների հիման վրա, որոշման մեջ դրանց առկայության մասին պարտադիր նշմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթեր են հանդիսանում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովների որոշումները՝ կնքված համապատասխան

համայնքների ղեկավարների կողմից, հողի սեփականության իրավունքի ժամանակավոր վկայականները, հողի սեփականության իրավունքի պետական ակտերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականները, շենքերի սեփականության վկայագրերը, այգեգործների անդամատոմսերը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասերի ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերը և հողամասերի հատակագծերը՝ տրված իրավասու պետական մարմինների կողմից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված օտարման, սեփականաշնորհման, վարձակալության մասին պայմանագրերը, անշարժ գույքի բռնագանձման վերաբերյալ վճիռներն ու դատավճիռները, կտակի, ըստ օրենքի իրավահաջորդության կամ ժառանգման վերաբերյալ փաստաթղթերը, գյուղական բնակավայրերում տնտեսությունների գրքերից (ծխամատյաններից) քաղվածքները, անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթեր:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ պարագայում Հովհաննես Սեդրակի Մուրադյանը չի ներկայացրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված՝ 06-061-0130-0031 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ օգտագործման իրավունքի առկայությունը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև չի ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարության «Հեքիաթ Հանգրվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը չի ներկայացրել 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

Ինչ վերաբերում է «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառությանը, որին հղում է արված Հովհաննես Սեդրակի Մուրադյանի դիմումում, ապա այն դիմումում նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման համար կիրառելի չէ, քանի որ հողամասի վրա բնակելի տուն առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով և 55-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Հովհաննես Սեդրակի Մուրադյանի 2023 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Սեդրակի Մուրադյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2023թ. № 965

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0517-0016 և 06-006-0517-0013 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից առանձնացված 0,0075 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1992 թվականին ինքնակամ կառուցված ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Օլյա Տրանդաֆիլովա» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող»

ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2023CCJRLA և Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06006CGU4AX9)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0517-0016 և 06-006-0517-0013 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից առանձնացված 0,0075 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 56,30 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0517-0016 և 06-006-0517-0013 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից առանձնացված 0,0075 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց, 20/15 ավտոտնակ» հասցեն:

5. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու հասմար:

6. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել Աշոտ Արտավազդի Նալբանդյանին (ծնված՝ 04.01.1968թ.) օրինականացված կառույցը և դրա պահպանման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ. Զոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2023թ. № 966

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝ հաշվի առնելով, որ Սպիտակի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃ-ԱՇՁԲ-23/27» ծածկագրով գնման ընթացակարգի 2023 թվականի հոկտեմբերի 10-ին հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը այդ մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները, սակայն մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել և չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 3 որոշմամբ մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել՝

որոշում եմ

1. «ԴՈՆԵՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբեր 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2023թ. № 967

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 12 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 536 000 (հինգ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2023թ. № 968

ԱՐԳԱՄ ՕՆԻԿԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 48[1]-րդ և 76-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման» կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 97-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24072023-06-0044 վկայականը և Արգամ Օնիկի Մաթոսյանի ներկայացուցիչ Ալբերտ Օնիկի Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց թիվ 19/7 հողամաս» հասցեում գտնվող 06-006-0019-0105 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00192 հեկտար մակերեսով հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրել Արգամ Օնիկի Մաթոսյանին (ծնված 05.10.1979թ.): Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարը սահմանել 6000 ՀՀ դրամ:

2. Արգամ Օնիկի Մաթոսյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2023թ. № 969

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՒՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ՎԱՐԴԱՆ ԳԱԳԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ՄԱՐՏԻՆ ԳԱԳԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՀՌԻՓՍԻՄԵ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԱԹՈՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» ենթակետով, 22.1-րդ կետով, հաշվի առնելով, որ Գագիկ Մարտունի Ավետիսյանին, Վարդան Գագիկի Ավետիսյանին, Մարտին Գագիկի Ավետիսյանին և Հռիփսիմե Արշալույսի Աթոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0280-0058 կադաստրային ծածկագրով 0,12 հեկտար մակերեսով հողամասի վրա 2018 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1397726 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20238TGS4B, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման

հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Գագիկ Մարտունի Ավետիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գագիկ Մարտունի Ավետիսյանին (ծնված՝ 10.01.1955թ.), Վարդան Գագիկի Ավետիսյանին (ծնված՝ 24.12.1980թ.), Մարտին Գագիկի Ավետիսյանին (ծնված՝ 14.08.1982թ.) և Հռիփսիմե Արշալույսի Աթոյանին (ծնված՝ 01.01.1956թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ «Լոռու մարզ, ք. Սպիտակ, Սայաթ-Նովա փողոց, 139 բնակելի տուն» հասցեում գտնվող, 06-006-0280-0058 կադաստրային ծածկագրով 0,12 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 105,8 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը (առաջին հարկ) և 110 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը (երկրորդ հարկ) ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գագիկ Մարտունի Ավետիսյանի, Վարդան Գագիկի Ավետիսյանի, Մարտին Գագիկի Ավետիսյանի և Հռիփսիմե Արշալույսի Աթոյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի ճշգրտված հատակագիծը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Գագիկ Մարտունի Ավետիսյանին, Վարդան Գագիկի Ավետիսյանին, Մարտին Գագիկի Ավետիսյանին և Հռիփսիմե Արշալույսի Աթոյանին ՝

1) համայնքի բյուջե վճարել 370 033 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 19

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2023 թ. № 970

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՆՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 541 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի 2023 թվականի հուլիսի 10-ի N Մ-10072023-06-0004 որոշումը, հիմք ընդունելով «Գասպար Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19112020-06-0038 վկայականը և Արթուր Հովհաննեսի Միրզոյանի (ծնված՝ 20.03.1962թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Արթուր Հովհաննեսի Միրզոյանին և Արմեն Հովհաննեսի Միրզոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Պանրագործների թաղամաս թիվ 248» հասցեում գտնվող 06-006-0038-0044 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,59800 հեկտար մակերեսով վարելահող հողատեսքի հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 30-ի «Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող, Արթուր Հովհաննեսի Միրզոյանին և Արմեն Հովհաննեսի Միրզոյանին ընդհանուր բաժնային սեփականության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2023թ. № 971

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,04 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՐԱ ԹՈՐԳՈՄԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 0,04000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Ժորա Թորգոմի Ղուկասյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0282-0111 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված հողամասի չափը կազմում է 0,08000 հեկտար, որից 0,04 հեկտարը Ժորա Թորգոմի Ղուկասյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,04000 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 2000 թվականին կառուցված կիսանկուղը, կիսանկուղը, բնակելի տունը, հարթակը և պարիսպը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Արսեն Իսահակյան Ռուդիկի» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի

Նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006XYHRBKN) և Ժորա Թորգոմի Ղուկասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1" Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ժորա Թորգոմի Ղուկասյանի (ծնված՝ 04.04.1955թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0282-0111 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,04 հեկտար մակերեսով հողամասի, 22,08 քառակուսի մետր մակերեսով կիսանկուղի, 49,34 քառակուսի մետր մակերեսով կիսանկուղի, 99,76 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 38,77 քառակուսի մետր մակերեսով հարթակի, 1,27 քառակուսի մետր մակերեսով պարսպի, 0,60 քառակուսի մետր մակերեսով պարսպի, 0,96 քառակուսի մետր մակերեսով պարսպի և 0,77 քառակուսի մետր մակերեսով պարսպի նկատմամբ:

2. Ժորա Թորգոմի Ղուկասյանի կողմից տիրապետվող 0,04 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,04000 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 488 400 ՀՀ դրամ (1 քմ 1221 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Ժորա Թորգոմի Ղուկասյանին:

3. Ժորա Թորգոմի Ղուկասյանի կողմից տիրապետվող 0,08000 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ք. Քըրքորյան փողոց, 9-րդ նրբանցք, 5/4 բնակելի տուն» հասցեն:

4. Ժորա Թորգոմի Ղուկասյանին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Սպիտակի համայնքապետարան սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա առկա 20,16 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ կառուցված կիսակառույց մառանը օրինականացնելու գործընթաց սկսելու նպատակով:

5. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0282-0111 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,08000 հեկտար հողամասի հատակագիծը:

6. Ժորա Թորգոմի Ղուկասյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 19
ք.Սպիտակ